ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 8-15
դրամաշնորհի տրամադրման

ք. Երևան «19» 02 2015թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի (այսուհետև՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Նունե Մկրտչյանի (այսուհետև՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ միասին՝ կողմեր), համաձայն համաձայն «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-192-Ն օրենքի, ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման, կազմակերպության գործունեության ապահովման (այսուհետ՝ Ծրագիր) նպատակով՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 13900.0 հազար (Տասներեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ գումար՝ 2.1.2. կետով սահմանված հաշվետվության և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի փետրվարի 5-ի N 100-Ա հրամանով ստեղծված 2014 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման ոլորտային հանձնաժողովների (այսուհետև՝ հանձնաժողով) արձանագրության հիման վրա, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծախսերի նախահաշիվը և կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետև՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. կազմակերպությունից պահանջել ծրագրով նախատեսված միջոցառումները կատարել պայմանագրի ծրագրով սահմանված ժամկետում.

2.1.2. կազմակերպությունից պահանջել ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008 թ. Փետրվարի 4-ի N 80 հրամանով հաստատված ձևով՝ եռամսյակային (ձև Հ-2, Հ-4 աճողական և տեքստային) և տարեկան/վերջնական (ձև Հ-2, Հ-4 և տեքստային) հաշվետվություններ (այսուհետև՝ հաշվետվություն) ըստ փուլերի, մինչև հաշվետու ժամանակաշրջանի հաջորդող ամսվա 10-ը.

2.1.3. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.4. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.5. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ.. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.6. սույն պայմանագրին օրենքով կամ սույն պայմանագրով հիմքերով լուծելու դեպքում պահանջել իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝

պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետական կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Վճարումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում Կատարողի կողմից ներկայացվող եռամսյակային հայտերի հիման վրա՝ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները սահմանված կարգով Կոմիտեի կողմից ընդունման արդյունքներով: Ընդ որում առաջին եռամսյակի, և յուրաքանչյուր հաջորդ եռամսյակների առաջին ամսվա գումարների վճարումը կատարվում է Կատարողի կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ մինչև կատարողի կողմից ներկայացված հաշվետվությունների սահմանված կարգով ընդունումը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2015 թվականի հունվարի 12-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Վեճերի լուծման կարգը

7.1 Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագրի կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության

միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից և հետևյալ Հավելվածներից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը.

- *Հավելված N 1* – Ծրագրի իրականացման միջոցառումներ:
- *Հավելված N 2* - Ծրագրի իրականացման ծախսերի նախահաշիվ:

9.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հայաստանի Հանրապետություն	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ
Էկոնոմիկայի նախարարություն	0051, ք. Երևան, Կոմիտասի 49/2
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	
Հ/հ 900011010635	ՀՀ 1930044382170100
ՀՎՀՀ 02505983	ՀՎՀՀ 00116673
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
Արմեն Շահնազարյան	Նուսե Մկրտչյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
2015թ. 02 19 -ին
կնքված N 8-15 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	պահանջվող գումարը (հազ. դրամ)
1	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովման աշխատանքներ	Կանոնադրական խնդիրների իրականացում	Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի բնականոն գործունեություն	30.12.2015թ.	**13900.0**
	Ընդամենը					**13900.0**

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ք. Երևան
Մ. Մկրտչյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011010635
ՀՎՀՀ 02505983
Աշխատակազմի ղեկավար
Ա. Շահնազարյան

Կազմակերպություն
«Հավատարմագրման ազգայինմարմին» ՊՈԱԿ
ք. Երևան, Կոմիտասի 49/2
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930044382170100
ՀՎՀՀ՝ 00116673
Տնօրեն
Ն. Մկրտչյան

Հավելված N 2
19 02 2015թ.
N 8-15 պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

հազ.դրամ

N	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
1	Աշխատավարձ	2316.6	5791.6	9266.6	13900.0
ԸՆԴԱՄԵՆԸ		2316.6	5791.6	9266.6	13900.0

Հայաստանի
Հանրապետություն
Էկոնոմիկայի
նախարարություն
Աշխատակազմի ղեկավար
Ն. Նահապետյան

«Հավատարմագրման ազգային
մարմին» ՊՈԱԿ
Տնօրեն՝
Ն. Մկրտչյան